ՀՀ Արմավիրի մարզի Այգեվան գյուղական
համայնքի ղեկավար Ս. Էքիզյան
2014թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ, գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու և 62 համայնքի բնակիչների

14-07-2014թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին»,«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով,համայնքի ղեկավարի աշխատակազմի,ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝իր լիազորությունները:
2014թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:
Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները,որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում:Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամանօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը,որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ,որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը ,ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:
Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվում է աշնանացան հացահատիկի բերքահավաքի , ինչպես նաև գյուղ. մթերքների մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքներին:
Գյուղն ունի իր առանձնահատկությունները:
Հիմնականում զբաղվում են հողագործությամբ , այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Մեխանիզացիայի պակասությունը
3. Պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը:
4. Ոռոգման ջրի սակավություն

ՈՒշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:
Մարզպետարանից համայնքին հատկացվել է 80,550 տոննա սելիտրա և 2450 լիտր դիզելային վառելանյութ:
Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարաքային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի արձանագրվել հիվանդության դեպքեր:
Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 5 առևտրի օբյեկտ:

## Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման ,ինչպես նաև ընդերքօգտագործման վրա:
Ամենօրյա աշխատանք է կատարվում հողօգտագործողների հետ հողի հարկի,գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

## Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքները,տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:
Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի,ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Սիստեմատիկաբար,շաբաթը 2 օր համայնքում կատարվում է աղբահանություն,այդ նպատակով նախատեսված է 954.0 հ. դ. ,2014թ. համայնքի բյուջեից վճարվել է 449.65 հազար դրամ:

## Մշակույթի և երիտասարդության,կրթության,առողջապահության սպորտի,սոցիալական ծառայության բնագավառ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:
Աշակերտների թիվը՝ 195:
Աշխատողների թիվը՝ 30-ը,որից ուսուցիչներ՝ 23:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը:Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուների և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:
Համայնքում գործում է « Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով,որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ,անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է :Ի ուրախություն մեզ՝ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին :ՈՒշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահովների ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն, 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի շուրջ 21 սոցիալապես անապահով ընտանիքների, նորածինների երեխաների մայրերի և մահացածների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 1000,0 հազ. դրամ:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 211 թոշակառուներ: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 37: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:
Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ:Զորակոչից խուսափողներ չկան:
2014թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքում կատարվել է հսկայածավալ աշխատանքներ:
Համայնքի տնտեսությունների թիվը՝ 375, առկա բնակչության թիվը 1665 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են 1052 մարդ:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

| անվանումը | 2014թ. տարեկան | | կատարողական% |
|---|---|---|---|
| | պլան | փաստացի | % |
| հողի հարկ | 6275,6 | 2718,57 | 43,32 |
| գույքահարկ | 1812,0 | 1041,79 | 57,48 |
| տեղական տուրք | 75,0 | 0 | 0 |
| հողի վարձավճար | 660,0 | 198,5 | 30,08 |
| այլ ոչ հարկային եկամուտներ | ------ | ----- | ------ |
| այլ աղբյուրներից տրանսֆերտ | ----- | ---- | ----- |
| պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա | 18584,7 | 9292,4 | 50,0 |
| ընդամենը վարչական բյուջե | 27977,4 | 13251,25 | 47.36 |
| հողի օտարումից մուտքեր | ----- | ----- | ----- |
| տարեսկզբի ազատ մնացորդ | 3764.6 | 3764.6 | 100 |
| ընդամենը | 31742.0 | 17015.85 | 53,6 |

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1.Մանկապարտեզի շենքի վերանորոգում:

2. Մշակույթի տան վերանորոգում:

3.Խմելաջրի ջրագծերի անցկացում

Համայնքի հարգելի բնակիչներ 2014թ. ընթացքում համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման և համայնքի վիճակը բարելավելու համար հաշվի կառնվեն Ձեր կողմից առաջ քաշված բոլոր տեսակի առաջարկություններն ու հիմնախնդիրները:
2014 թվականի բյուջեի կատարման և Ձեր կողմից առաջարկված կարևորագույն աշխատանքները կատարելու համար հարկավոր է Ձեր աջակցությունը՝ այն է ժամանակին կատարել Ձեր հարկային պարտավորությունները:

Այգեվան համայնքի ղեկավար՝ Ս.Էրիզյան

2013թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով

| | Ծախսերի անվանումը | 2014թ. տարեկան | |
|---|---|---|---|
| | | պլան | փաստացի |
| 1 | տեղական ինքնակառավարում | 15304,3 | 7438,62 |
| 2 | աղբահանություն | 954,0 | 449,65 |
| 4 | գրադարան | 2142,9 | 1027,86 |
| 5 | սոց.օգնություն | 1000 | 0 |
| 6 | բնակ.տնտես. | 6800,0 | 2611,81 |
| 7 | սարքերի և սարք . ձեռք բեր. | 3264,6 | 0 |
| 8 | կապիտ. նոր. ծախսեր | 2000,0 | 585,0 |
| 9 | ֆոնդային բյուջե | 5264,6 | 585,0 |
| 10 | ընդամենը | 31906,1 | 11527,95 |

## Համայնքի հիմնախնդիրները

Չնայած , համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ- տնտեսական զարգացման որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով , ուժերով:

2013թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով

| | Ծախսերի անվանումը | 2014թ. տարեկան | |
|---|---|---|---|
| | | պլան | փաստացի |
| 1 | տեղական ինքնակառավարում | 15304,3 | 7438,62 |
| 2 | աղբահանություն | 954,0 | 449,65 |
| 4 | գրադարան | 2142,9 | 1027,86 |
| 5 | սոց.օգնություն | 1000 | 0 |
| 6 | բնակ.տնտես. | 6800,0 | 2611,81 |
| 7 | սարքերի և սարք . ձեռք բեր. | 3264,6 | 0 |
| 8 | կապիտ. նոր. ծախսեր | 2000,0 | 585,0 |
| 9 | ֆոնդային բյուջե | 5264,6 | 585,0 |
| 10 | ընդամենը | 31906,1 | 11527,95 |

## Համայնքի հիմնախնդիրները

Չնայած , համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ- տնտեսական զարգացման որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով , ուժերով:

# ՈՒՂԵՐՁ

Այգեվան գյուղական համայնքի ընդհանուր ժողովի

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմելու Ձեզ՝

1.Խմելու ջրագծի վերանորոգում

2.Մշակույթի տան վերանորոգում

3.Մանկապարտեզի շենքի վերանորոգում

Այգեվան համայնքի ղեկավար՝ Ս.Էքիզյան